«ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ»
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԴՊՐՈՑ

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ_ՀԱՎԱՔ

Թեմա՝ ֆլեշմոբները սովորողների և ուսուցիչների առարկայական հետաքրքրությունների դրսևորման հարթակ
Հեղինակ՝ Տաթև Մելքոնյան

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում 2015թ. սեպտեմբերից անցկացվում է ամենամսյա ֆլեշմոբ հայերեն, մաթեմատիկա, շախմատ, անգլերեն, ռուսաց լեզու, պատմություն և բնագիտություն առարկաներից:
Ֆլեշմոբն ուսուցման կազմակերպման նոր միջոց է, որն ունի մի շարք առավելություններ.

- ուսուցման գործընթացն ավելի հետաքրքիր է դարձնում
- նպաստում է սովորողների մտածողության զարգացմանը
- ընտանիքի անդամներին ներգրավում է ուսումնական աշխատանքում
- նպաստում է սովորողների մեդիահմտությունների զարգացմանը
- նպաստում է խմբային աշխատանքին

Մաթեմատիկայի ուսուցման ընթացքում ինքս կազմեցի ֆլեշմոբային նախագիծ:
Նախագծի շրջանակներում նախատեսված էր ֆլեշմոբն անցկացնել բանավոր և առցանց:

Բանավոր ֆլեշմոբն

Տեղում կազմեցինք 4 հոգանոց խմբեր: Յուրաքանչյուր խումբ ստացավ մեկ խնդիր:
Խմբի ներսում կարդացին խնդիրը, քննարկեցին, գտան պատասխանը:
Այնուհետև յուրաքանչյուր խմբից ընտրվեց մեկը և բարձրաձայն պատմեց, բացատրեց իրենց խնդիրներն այնպես, որ մյուս խմբերը նույնպես կարողացան հասկանալ և լուծել այն:
Բանավոր ֆլեշմոբի հետաքրքիր աշխատանք էր նաև սովորողների կողմից
տրամաբանական խնդիրներ հորինելը:

Բանավոր ֆլեշմոբի անցկացումն ունի մի շարք առավելություններ.

- նպաստում է տրամաբանական մտածողության զարգացմանը
- բանավոր խոսքի զարգացմանը
- երևակայական մտածողության զարգացմանը
- ուշադրության կենտրոնացմանը
- խմբով աշխատելու կարողության զարգացմանը,
- ձևավորում է պատասխանատվության զգացում ոչ միայն սեփական, այլ ընդհանուր աշխատանքի նկատմամբ:

Առցանց ֆլեշմոբը անցկացրինք մի քանի փուլով՝ դասարանական, դպրոցական և ընտանեկան

- Դասարանական ֆլեշմոբը անցկացրինք մաթեմատիկայի պարապմունքին: Խնդիրները տեղադրեցի Google Drive համակարգում և հղումը ուղարկեցի սովորողներին: Սովորողները սկսեցին ինքնուրույն լրացնել թերթիկը: Սահմանված ժամանակահատվածը լրանալուց հետո, սովորողներն ուղարկեցին աշխատանքները:
  Հաջորդ օրը քննարկեցինք և միասին ստուգեցինք աշխատանքները: Ստուգելու ընթացքում ևս սովորում են:
- Դպրոցական ֆլեշմոբն անցկացրինք բլոգավարությամբ: Նախապես խնդիրները տեղադրեցի բլոգումս և հղումն ուղարկեցի դպրոցի սովորողներին և դասվարներին:
  Այս անգամ սովորողները պատասխանները լրացրին իմ բլոգում՝ կարծիքներ բաժնում՝ գրելով խնդիրների պատասխանները:

Ընտանեկան ֆլեշմոբ

Ընտանեկան ֆլեշմոբի անցկացումը հրաշալի առիթ է ծնողներին, տատիկ-պապիկներին ուսումնական գործընթացին ներգրավելու համար:
Խնդիրները նախապես բլոգում տեղադրեցի և հղումն ուղարկեցի ծնողների հասցեներին:
Գովելի է, որ ընտանիքի անդամները մեծ ոգևորությամբ մասնակցեցին:
Բլոգում հրապարակել եմ նաև ծնողների կարծիքները ֆլեշմոբի կազմակերպման մասին:

Սովորողները ֆլեշմոբի մասին իրենց ոգևորությունը ներկայացրել են ռադիոնյութի տեսքով:

Հոդված- Ֆլեշմոբի կազմակերպումը որպես ուսուցման նոր ձև